ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐԵՆԻ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գործնական աշխատանք

Մշակող՝ Արմինե Կոստանդյան

2021թ.

Գործնական աշխատանք. թատերախաղ

«Գարունածաղիկը» հեքիաթի բեմականացում

Ուսուցիչը հանձնարարում է տանը 2 օրվա ընթացքում պատրաստվել հեքիաթը բեմականացնելու: Համապատասխան դերաբաշխմամբ դասարանը բաժանվում է խմբերի՝

- *հեքիաթը բեմագրի(սցենարի) վերածողներ,*
- *ռեժիսոր և նրա օգնականները,*
- *դեկորացիաներ պատրաստողներ,*
- *երաժշտական ձևավորողներ,*
- *դերակատարներ,*
- *լրագրող-հանդիսատեսներ:*

Կախված աշխատանքի բնույթից՝ խմբերը, բնականաբար, չեն ունենա նույն քանակի անդամներ: Ուսուցչի օգնությամբ յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի իր «առաջնորդին», որը կհամակարգի իրենց բաժին աշխատանքը:

1-ին խմբում ընդգրկվում են տեքստի հետ գրագետ ու վարժ աշխատող երեխաները: Ուսուցիչը հուշում է, որ բեմագիրները կարող են հերոսներ ավելացնել կամ պակասեցնել, սյուժեի հետ որոշակի փոփոխություններ կատարել: Բեմագիրները դերային խոսքերն առանձին-առանձին գրում են թղթերի վրա և բաժանում դերակատարներին կամ էլ. փոստով ուղարկում նրանց:

2-րդ փոքրիկ խմբում ռեժիսորն ու իր երկու օգնականներն են, որոնք էլ գոնե երկու անգամ կազմակերպում են բեմադրության փորձը:

3-րդ խմբում ընդգրկվողները նկարելու ձիրք և պատրաստելու հմտություն ունեցողներն են։ Ձևավորողներն ազատ են դեկորների չափերի և տեսքի հարցում։ Դեկորները կարելի է պատրաստել ստվարաթղթից։ Դրանք կարող են լինել ինչպես բնության նկարված տեսարաններ, այնպես էլ պարզապես գունային լուծումներով։

4-րդ խմբում երաժշտական ձևավորողներն են։ Նրանք համացանցում փնտրում և գտնում են հեքիաթի տարբեր դրվագներին համապատասխան երաժշտական հատվածներ և ներբեռնում հեռախոսի մեջ։ Կարելի է օգտագործել Վիվալդիի, Մոցարտի, Շոպենի ստեղծագործությունները։

5-րդ խմբում հավաքվում են դերասանական շնորհ ունեցողները։ Նրանց դեպքում շատ կարևոր է համագործակցային առողջ մթնոլորտում ռեժիսորի հետ ճիշտ աշխատանքը։

6-րդ խմբի անդամները՝ լրագրողները, պետք է հարցեր նախապատրաստեն՝ վերջում մասնակիցներին, նաև ուսուցչին կամ հյուրերին ուղղելու։ Նրանք նաև իրենց ընկերների աշխատանքը լուսաբանող 2-3-րոպեանոց տեսանյութ պետք է պատրաստեն։

Նախապատրաստական փուլում ուսուցիչը, հետևելով աշխատանքին և հատկապես երեխաների համագործակցային կարողունակություններին, հարկ եղած դեպքում կօգնի իր խորհուրդներով։

Թատերախաղի ավարտին խմբերը պետք է կատարեն ինչպես փոխադարձ գնահատում, այնպես էլ ինքնագնահատում։ Բոլորը միասին պետք է որոշեն, թե ո՛ր խումբն է իր գործը լավագույնս կատարել։

Կարելի է սահմանել խրախուսական մրցանակներ լավագույն անվանակարգերի համար։ Ուսուցիչը կառատջարկի, որ կարելի է լավագույններին դիմակներ նվիրել, քանի որ դիմակը և՛ թատրոնի, և՛ հավերժության խորհրդանիշն է։ Նկարչական ձևավորում անող խմբին կարելի է խնդրել՝ պատրաստեն նաև ստվարաթղթե մի քանի դիմակ։

Կարելի է սահմանել այսպիսի անվանակարգեր՝

Լավագույն խմբային աշխատանք

Լավագույն դերակատար

Լավագույն մասնակից

Լավագույն «առաջնորդ»